# ՄԻ ԾՆՈՂԱՍՊԱՆ

*Գի Դը Մոպասանի՝ թարգմ. Մ. Նաւասարդեանի*

Փասպարանն իր պաշտպանեալի խելագար եղածն էր հաստատել։ Այլապէս ինչ կերպ բացատրել այս տարօրինակ ոճիրը։

Մի առաւօտ, Նատուի մօտերքում եղեգների մէջ, գտել էին երկու դիակ իրար փաթաթուած, կինն ու երիկը, երկուսն էլ յայտնի զարհուրելիներ, հարստական, մանաւանդ բոլորովին նորատի և միայն նախընթաց տարին ամուսնացած կինը հազիւ երեք տարուայ այրի էր։

Սրանք ոչ մի թշնամի չունէին, և այժմ էլ կողոպտուած չէին։ Այնպէս էր թւում թէ սրանց ժայռից էին գահավիժել գետի մէջ մի սրածայր երկաթի ձողով, մէկը միւսի ետևից, նախապէս սպանելուց վերջը։

Խուզարկութիւնը բան չապացուցեց։ Հարցաքննուած նաւազները ոչինչ չըգիտէին. մնում էր գործը առանց հետևանքի թողնել, երբ մօտակայ գեղի մի ջահել ատաղձագործ ծորժ Լուի անունով, մականուանուած Լը Բուրժուա, ինքն իրեն յանձնեց դատարանին։

Բոլոր հարց ու փորձին նա միմիայն այս էր պատասխանում։

—Երկու տարուց ի վեր ես ճանաչում էի այն մարդուն, իսկ կնոջ՝ վեց ամիս է. նրանք յաճախ էին գալիս մօտս հին կարասիները նորոգել տալու, որովհետև արհեստիս մէջ հմուտ եմ։

Եւ երբ նրան հարցնում էին.

—Ի՞նչի սպանեցիք նրանց։

Նա պատասխանում էր յամառութեամբ.

—Ես նրանց սպանեցի, որովհետև կամենում էի սպանել։

Ուրիշ պատասխան չլսեց նրա բերանից։

Այս մարդը մի ապօրինի զաւակ էր անկասկած, որ տուել էին մի գեղջուկ դայեակի, յետոյ թողել անտէրունչ։ Նա յայտնի էր միայն Ժորժ Լուի անունով, բայց մեծանալով՝ իւր բնածին քնքշութիւնների ու հակումների համար, որոնցից գլխովին զուրկ էին սրա ընկերները, մականունեցին «քաղքեցի», ու այնուհետև էլ ուրիշ կերպ չէին կոչում։ Նրան ճանաչում էին իբր շատ հմուտ վարպետ իր արհեստում, որին ամբողջովին անձնատուր էր եղել։ Գիտէր նաև փոքր ինչ փայտի վրայ փորագրել։ Նա յայտնի էր նոյն իսկ Լբրև տաք-գլուխին մէկը, մինչև անգամ կուսակից կոմունիստական ու նիհիլիստ վարդապետութիւնների, սիրահար արկածալից վէպերի, արիւնուռչտ դրագիկ դրամաների, այլ և ազդեցիկ քէարկող և հմուտ ճառախօս արհեստաւորների կամ գեղացիների հասարակական ժողովներում։

*
* *

Փաստաբանը իր պաշտպանեալի խելագար եղած լինելն էր հաստատել։

Ինչպէս կարելի էր ընդունել, որ այս արհեստաւորը սպանէր իր ամենալաւ մուշտարիներին, հարուստ և առատաձեռն (ինչպէս ինքն էր խոստովանում), որոնք նրան, երկու տարուայ ընթացքում, երեք հազար Ֆրանկի նորոգութեան աշխատանք էին տուել. (նրա մատեաններն էլ հաստատում էին այդ)։ Մի բացատրութիւն կար միայն. խելագարութիւնը, idée fixe մի դասագուրկ մարդու, որը բոլոր բուրժուաների դէմ իր տածած վրէժխնդրութիւնը լուծում է երկու բուրժուաներից. և փաստաբանը ճարպիկօրէն ակնարկեց նրա Լը Բուրժուա մականուն վրայ, որ նրան տուել էին գեղացիները և թողել նրան իր բաղդին. նա բացականչում էր.

—Հեգնութիւն չէ՞ այս արդեօք և մի հեգնութիւն, որ կարող է աւելի ևս մոլեգնել այս թշուառ մարդուն, որ ոչ մայր ունի և ոչ հայր։ Սա մի եռանդուն հասարապետական է։ Ինչ եմ ասում, սա կուսակից է նոյն իսկ այն քաղաքական գաղափարի, որ առաջ հանրապետութիւնը հրացանի էր բռնում, և աքսորում, իսկ այժմ ընդունում է գրկաբաց. նա պատկանում է այն կուսակցութեան,

որի համար հրձիգութիւնը մի սկզբունք է և սպանութիւնը մի շատ հասարակ միջոց։

Հասարակական ժողովներում ծափահարւած այս տխուր վարդապետութիւններն էին որ կորցրին այս մարդուն։ Սա լսել է հանրապետականներին, կանանց նոյն իսկ, այո՛ կանանց, որոնք պարոն Գամբետային, պարոն Գրևիի արիւնն էին պահանջում. միտքը մոլորւել է, նա արիւն է ցանկացել, բուրժուայի արիւն։

Սա չէ դատապարտելին, պարոններ, այլ Կոմմունը (la Commune)։

Հաւանութեան շշուկներ լսեցին։ Ամենքը լաւ զգում էին, որ փաստաբանն իր դատը վաստակեց։ Դատախազը չպատասխանեց։

Այն ժամանակ նախագահը մեղադրեալին սովորական հարցը տւեց.

—Ամբաստանւած, բան ունի՞ք աւելացնելու ձեր պաշտպանութեանը։

Մարդը ոտի կանգնեց.

Նա կարճահասակ, շէկ մազերով, գորշ, սևեռուն և վճիտ աչերով մի մարդ էր։ Այս տկար մարդու կոկորդից ձայնը բղխում էր ուժգին, ազատ և հնչուն և առաջին քանի մի խօսքերով գրաւեց ունկնդիր հանդիսականների համակրանքը։

Նա խօսեց բարձրաձայն, ճարտասանական ձևով ու այն աստիճանի պարզ, որ նրա ամեն մի խօսքը լսելի էր մեծ դահլիճի խորքից։

—Ցարգոյ նախագահ, որովհետև չեմ կամենում գժանոց մտնել ու առաւել գերադասելի է ինձ համար կառափնոցը (guillotine), այս պատճառով բոլորը կը պատմեմ ձեզ.

Ես սպանեցի այն մարդ ու կինը, որովհետև նրանք իմ ծնողներն էին։

Սրդ, լսեցէք ինձ և դատեցէք։

Մի կին արու զաւակ ծնելով՝ ղրկեց նրան գեղջուկ մի դայեակի մօտ սննդելու։ Այն կնոջը միայն յայտնի էր թէ ո՞ւր տարաւ իր մեղսակիցը փոքրիկ անմեղ արարածին, որ դատապարտւած էր յաւիտենական թշուառութեան, ապօրինի ամօթանքի. դեռ աւելին՝ նա մահուան էր յանձնւած, քանի որ նրան բարձի

թողի էին արել. որովհետև դայեակը չը սպանելով այլ ևս իր ամսական վճարը՝ կարող էր, ինչպէս որ պատահում է յաճախ, երեսի վրա գցել, սովի տանջել կամ անտէրունջ թողնելով թշուառի սպանել։

Իմ սրընտրուն աղնիւ գտնուեց, աւելի աղնիւ, աւելի կանացի, աւելի մեծ և մայրագութ քան թէ մայրս։ Նա ինձ մեծացրեց։ Նա յանցանք գործեց իր պարտաւորութիւնը կատարելով։ Արդեօք գերադասելի չէ՞ թողնել, որ մօտակայ գիւղերում գցած այդ թշուառները ոչնչանան ինչպէս աղբակոյտերի վրայ թափուած մի անպէտք իր։

Ես ամեցի այն անորոշ զգացումով թէ վրաս անպատուութիւն եմ կրում։ Միւս երեխաները մի օր ինձ «բիճ» անուանեցին. նրանք չը գիտէին թէ ինչ էր նշանակում այդ խօսքը, որ նրանցից մէկը լսել էր իր ծնողներից։ Անգիտանում էի և ես այդ խօսքի իմաստը, սակայն զգում էի։

Կարող եմ հաւատացնել, որ ուսումնարանում ամենաընդունակներից մէկն էլ ես էի։ Կարող էի աղնիւ մարդ դառնալ, պարոն նախագահ, կարելի է մեծ մարդ, եթէ ծնողներս ինձ լքելու յանցանքը չը գործէին։

Նրանք իմ դէմ գործեցին այդ յանցանքը։ Ես զոհը եղայ, նրանք չարագործները։ Ես անպաշտպան էի, նրանք գտնուեցին անգութ։ Պարտաւոր էին ինձ սիրելու, բայց հեռացրին իրանցից։

Գոյութեամբս նրանց էի պարտական—սակայն կեանքը մի պարգև է արդեօք։ Իմ զոնէ դժգաղդութիւն էր միմիայն։ Ամոթալի լքումից յետոյ ես նրանցից միայն վրէժ պէտք էր լուծէի։ Նրանք իմ դէմ առաւել փմարդի, առաւել վատանուն, աւելի հրէշաւոր յանցանք գործեցին, քան ինչ որ կարելի է մի որ և է արարածի դէմ։

Նախատուած մարդը զարկում է, կողոպտուածը ոյժով յետ է ստանում իր գոյքը, խաբուածը, նենգուածը, տանջուածը սպանում է, անպատուած մարդը սպանում է։ Ես բարոյապէս աւելի խիստ էի կողոպտուած, խաբուած, տանջուած, ապտակուած քան թէ նրանք, որոնց բարկութիւնը դուք արդարացնում էք։

Վրէժս լուծեցի, ես սպանեցի։ Այդ իմ օրինական իրա-

ուունքս էր։ Ես նրանց զրկեցի երջանիկ կեանքից իմ երջանիկ կեանքիս փոխարէն։

Դուք պիտի առարկէք թէ ես ծնողասպան եմ։ Ծնողներս էին նրանք արդեօք, այդ մարդիկ, որոնց համար ես մի անպանելի բեռ, մի սարսափ, մի անուանարկու արատ էի, որոնց համար իմ ծնունդը մի չարիք, ու կեանքս ամօթաբեր սպառնալիք էր։ Նրանք հսամոլ զարճանք էին որոնում, անսպասելի կերպով երեխայ ունեցան, և անյայտացրին երեխային։ Հերթը հասաւ ինձ նոյն կերպ վարուելու նրանց հետ։

Սակայն վերջերս ես պատրաստ էի նրանց սիրելու։

Ամուսնիկ երկու տարի կը լինի, ինչպէս ասացի, որ հայրս, առաջին անգամ մտաւ իմ մօտ։ Ես ոչինչ չէի կասկածում. նա ինձ երկու կտոր կարասի պատուիրեց։ Աւելի ուշ իմացայ միայն, որ նա իմ մասին տեղեկութիւն էր հարցրել գիւղի երէցից, որը ի հարկէ դաղտնիքը ուրիշներին յայտնելու չէր։

Նա յաճախում էր մօտս աշխատեցնում և ինձ առատօրէն վարձատրում։ Երբեմն էլ նոյնիսկ խօսում էր փոքր ինչ դէսից, դէնից։ Սկսեցի սէր տածել դէպի նա։

Այս տարաւայ սկիզբներում նա հետը բերեց և կնոջը։ Երբ մայրս մտաւ այն աստիճան խիստ դեղում էր, որ կարծեցի թէ նեարդային հիւանդ է։ Նստեց և մի բաժակ ջուր խնդրեց։ Նա ոչինչ չէր ասում, կարասիներիս նայում էր խելացնորի պէս, և հօրս տուած հարցերին անթերի կերպով պատասխանում էր միայն այո և ոչ։

Նրանց գնալուց յետոյ կարծեցի թէ այդ կինը փոքր ինչ վնասուած է մտաւորապէս։ Յաջորդ ամսին նորից եկաւ, արդէն հանգիստ ու անշփոթ։ Այս անգամ բաւական երկար խօսեցին ու մի խոշոր պատուէր յանձնարարեցին։ Տեսայ նրան մի երեք անգամ ևս առանց մի բան դուշակելու. ահա, մի գեղեցիկ օր խօսեց կենցաղիս, մանկութեանս, ծծնողներիս մասին։ Ես պատասխանեցի—«Տիկին, ծնողներս թշուառականներ են, որ լքել են ինձ»։ Այն ժամանակ ձեռքը տարաւ սրտին և ընկաւ ուշաթափ։ Իսկոյն ևեթ ասի ինքս ինձ—«մայրս է». սակայն զգուշացայ զգացնել տալուց։ Ուզում էի դարձեալ տեսնել նրան մի քանի անգամ։

Նրանց օրինակին հետևելով ես ևս սկսեցի տեղեկութիւններ

հաւաքել. իմացայ, որ նրանք միայն նախընթաց յուլիսին էին ամուսնացել, մայրս երեք կարի առաջ էր այրիացել։ Թէև շատ էին մարդիկ իրար ականջին շշնջել թէ նրանք հօրս կենդանութեան միջոցներին արդէն յարաբերութիւն են ունեցել, բայց ոչ մի ապացոյց չկար։ Ես էի ապացոյցը, ապացոյց, որ նրանք քաղել էին սկզբներում, ապագայում անհեպացնելու յոյսով։

Ես սպասեցի։ Մի երեկոյ կրկին յայտնուեց մօտս իր ամուսնու հետ։ Այս անգամ նա ինձ խիստ յուզած թուաց, չգիտեմ ինչ պատճառով։ Ապա, մեկնելուց առաջ, ինձ ասեց—«Ձեզ բարիք եմ ցանկանում, որովհետև կարծում եմ թէ դուք մի ազնիւ ու աշխատասէր ջահել տղայ էք. մտադրուել էք, անշուշտ, մի անգամ ամուսնանալ, եկել եմ ձեզ օգնելու, որ կարենաք ազատօրէն ձեր հաւանած աղջկան կնութեան ընտրէք։ Ինքս ամուսնացել եմ մի անգամ հակառակ կամքիս ու գիտեմ թէ ինչքան են տանջուում այդպիսի դէպքերում։ Այժմ ես հարուստ, անզաւակ, ազատ և հարստութեան տէր եմ։ Ահաւասիկ ձեր բաժինքը»։

Նա մեկնեց ինձ մի մեծ փակ ծրար։

Ես նրան նայեցի սևեռուն աչքերով ու յուրոյ ասի. «Դուք իմ մօտն էք»։

Նա երեք քայլ ընկրկեց ու ինձ էլ չտեսնելու մտքով ձեռներով ծածկեց աչերը։ Իսկ նա, ամուսինը, հայրս նրան կռների վրա պահելով գոռաց վրաս.

«Դուք խելագար չէք, հօ»։

Ես պատասխանեցի. «Ամենևին ոչ, հաստատ գիտեմ, որ դուք իմ ծնողներն էք։ Ձեզ կարող այդպէս ինձ խարել. խոստովանեցէք, ու այդ գաղտնիքը իմ մէջ կը մնայ. ես ձեզանից չեմ նեղանայ։ Կը մնամ նոյն ատաղձագործը»։

Նա ընկրկում էր դէպի ելքը կնոջը շարունակ գրկած, որ հեկեկում էր արդէն։ Շտապով դուռը գոցեցի ու բալնիքը գրպանս դնելով նորից ասի. «Նայեցէք դրան և ուրացէք դարձեալ թէ նա մայրս չէ»։

Այն ժամանակ նա կատաղեց և փժդունեց, սարսափելով այն մտքից, որ մինչև օրս խոյս տուած խայտառակութիւնը կարող էր յանկարծակի յայտնուել, ու նրանց դրութիւնը, նրանց հռչակն ու

պարիւը կոչընչանար մի բոպէում։ «Դուք սինլքորի մէկն էք—կակազեց նա—ու կամենում էք մեզանից փող շորթել. արի ու բարութիւն արա ժողովուրդին, այս գռեհիկներին, օղնիր, նպաստիր սրանց»։

Մայրս շփոթուած կրկնում էր շուտ-շուտ. «Հեռանանք, հեռանանք այստեղից»։

Բայց որովհետև դուռը գոց էր, ամուսինը գոռաց.

«Եթէ այս բոպէին դուռը չբանաք, ես ձեզ բանտը նետել կը տամ բռնութեան և շանտաժի պատճառով»։

Ես շփոթուած չէի, բացի դուռը և տեսայ թէ ինչպէս նրանք անհետացան մթութեան մէջ։

Այն ժամին ինձ թւաց յանկարծ թէ նոր որբացայ, լքուած, ու անտէր։ Սոսկալի տրտմութիւնը բարկութի, զզուանքի, ատելութեան հետ խառնուած տիրեց ինձ. արդարութեան, շիտակութեան, պատի և մերժուած սիրուս բողոքը զգացի մէջս։ Սկսեցի վազել Սենայի գետափով, որտեղից նրանք պիտի հասնէին Շատուի կայարանը։

—Շուտով հասայ նրանց։ Անասելի մութ գիշեր էր։ Ես գիլաքաշ էի քայլում արօտի վրայ, այնպէս որ նրանք չլսեցին ոտնաձայնս։ Մայրս լալիս էր շարունակ։ Հայրս ասում էր. «Դուք էք մեղաւորը, ինչնՔրիդ էր պէտք տեսնել նրան անպատճառ։ Խեւութիւն է մեր արածը. կարելի էր նրան բարիք անել առանց երեւալու։ Ի՞նչ կարիք վտանգաւոր տեսակցութիւնների, քանի որ անկարող ենք նրան մեր զաւակ ընդունել»։

Այն միջոցին ես նրանց առջև յայտնուեցի. «Դէհ տեսնում էք, որ դուք ծնողներս էք, դուք մի անգամ ինձ մերժեցիք, այժմ նորից պիտի աքացէք»։

Այն ժամանակ, պարոն նախագահ, նա ձեռք բարձրացրեց վրաս, երդւում եմ պատուով, օրէնքով, հասարակապետութեան անունով։ Նա ինձ հարւածեց, և որովհետև նրա օձիքից բռնեցի, գրպանից ատրճանակ հանեց։

Աչքերս շաղւեցին, չգիտեմ այլ ևս, կարկինս մօտս էր, հարւածեցի նրանով, հարւածեցի որչափ կարողացայ։

Այդ միջոցին մայրս մօրուքս փետելով սկսեց աղաղակել «օգ-

նութիւն, սպանում են։ Երևում է, որ նրան էլ եմ սպանել. կարող եմ գիտենալ թէ ինչ եմ արել այն բոպէին։

Ապա, երբ նրանց երկուսին էլ գետնատարած գտայ, նետեցի Սենա գետը՝ առանց մտածելու։ Վերջացրի։ Այժմ դատեցէք ինձ։

Մրցասրանուածը նստեց տեղը։ Այս յայտնութեան առիթով գործը յետաձգուեց յաջորդ նիստին և շուտով կը քննուի։ Եթէ մենք երդուեալ դատաւորներ լինէինք, ինչպէս կը վարուէինք այս Ծնոշասպանի հետ։